

# ԱՐՏԱՇԵՍ ՉԻՐՈՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԹԱՆԳԱՄՅԱՆ, ՔՆԱՐԻԿ ՈՒՉՈՒՆՅԱՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ՓԻԼԹԱԿՅԱՆ

## ՍՅՈՒՆԻՔԻ ԼԱՆՊՇԱՖՏԱ-ԲՆԱԿԱՍԿԱՆԱԿԱՆ և ԷԿՈԼՈԳԱ- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տրվել են Սյունիքի մարզի լանդշաֆտա-բնապահպանական և Էկոլոգա-մշակութային առանձնահատկությունները: Նշվել է ինչպես մարզի բնության հատուկ պահպանվող տարածքների, այնպես էլ բնական և կուլտուրական առավել տարածված լանդշաֆտային Էկոհամակարգերի կառուցվածքա-գործառնական բնույթը և կայուն օգտագործման հնարավորություններն ու հեռանկարները: Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքներից՝ «Չանագեղուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի կազմում գործում է մեկ պետական արգելոց, մեկ ազգային պարկ և հինգ պետական արգելավայր: Բնության հուշարձանները՝ 56-ն են, որը կազմում է հանրապետության հուշարձանների 25%-ը: Էկոլոգա-բնապահպանական գիտելիքների ձեռքբերումը պետք է դառնա ուսուցողական, կրթական և որակավորման ծրագրերի, ինչպես նաև կենսաբանական խնդիրներին առնչվող ոլորտներում իրականացվող գիտական աշխատությունների առարկա և ուղղություն:

**Բանալի բառեր՝** հատուկ պահպանվող տարածք, կենսոլորտ, Էկոհամակարգ, լանդշաֆտ, կենսաբազմազանություն, Էկոլոգիա:

Վերջին տասնամյակներում Հայաստանի Հանրապետությունում, և առանձնապես Սյունիքի մարզում, արձանագրվող բնական ռեսուրսների ինտենսիվ շահագործումը, ինչպես նաև Էներգետիկայի, ընդերքօգտագործման և տրանսպորտի բնագավառների փոփոխություններն աստիճանաբար ավելացնելով շրջակա միջավայրի վրա անթրոպոգեն (մարդածին) ճնշումները՝ առաջացրել են այնպիսի գլոբալ մարտահրավերներ, ինչպիսիք են՝ կենսառեսուրսների սպառման վտանգը, Էկոլոգիական իրավիճակի վատթարացումը, կլիմայի փոփոխությունները, բնական և տեխնածին աղետների ակտիվացում, կենդանական և բուսական աշխարհի (կենսաբազմազանություն) աղքատացում և այլն:

Յուրաքանչյուր երկրի զարգացման տարբեր չափորոշիչների հետ միասին խիստ կարևոր ցուցանիշ են նաև բնության հատուկ պահպանվող տարածքների և լանդշաֆտային առանձին միավորների պահպանության մակարդակը: Մարզինալ տարածքների հետ միասին պահպանության ենթակա են բնական առանձին օբյեկտներ՝ արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր, բնության հուշարձաններ և վերջապես բնական և կուլտուրական կարևորագույն

լանդաֆտներ, որտեղ դեռևս ինչ-որ չափով պահպանվել է անաղարտ, կուսական էկոհամակարգերն ու բնությունը [1, ս. 41; 2, ս. 353; 3, էջ 552]:

Ինչպես երևում է աղյուսակից որպես «Չանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի կազմում Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքներ հանդես են գալիս մեկ պետական արգելոց (Շիկահող), մեկ ազգային պարկ (Արևիկ) և հինգ պետական արգելավայր (Սոսու պուրակ, Բողաքար, Սև լիճ, Չանգեզուր, Խուստուկ):

ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. հա 967-ն որոշումով հաստատած 220 բնության հուշարձաններից՝ 56-ը (25%) գտնվում է Սյունիքի մարզում: Ըստ որի երկրաբանական հուշարձանների թիվը՝ 20 (օրինակ՝ Սատանի կամուրջ), ջրաերկրաբանական՝ 16 (Որոտան աղբյուր), ջրագրական՝ 13 (Շաքի ջրվեժ), բնապահպանական՝ 4 (Հին Գորիս հրաբխային ապարներ), կենսաբանական՝ 3 (Շիրբյակ):

Սյունիքը կարևոր էկոտոլրիստական միջավայր է, և ճանաչելի իր բիբլիական բնապատկերներով՝ գեղեցիկ ուրվագծեր ունեցող բարձր լեռնաշղթաներով ու լճերով, խորը ձորերով, հարթավայրերով, հոսող գետերով, դաշտավայրերում մշակվող նռան ու խաղողի և մրգատու այգիներով, մարգագետնային և տափաստանային փարթամ բուսականությամբ օժտված լանդաֆտային էկոհամակարգերով: Հայ ժողովրդի հոգևոր և արժեքային համակարգին բնորոշ է լանդաֆտի նկատմամբ էկոլոգիական և բնապահպանական բարձր զգայնությունը: Դրա վկայություններից է օրինակ՝ Չանգեզուրի ու Խուստուկի լեռների երկրի պատմաշխարհագրական խորհրդանիշների շարքին դասելը: Բնության և մարդկային ստեղծագործության ներդաշնակության կատարյալ նմուշներ են հայկական պատմաճարտարապետական հուշարձաններից՝ Տաթևի վանքն իրեն հոգևոր մշակութային կենտրոնով:

Բնության առանձնահատուկ արժեք ներկայացնող տարածքների պահպանության վերաբերյալ դրույթները և բնապահպանական խնդիրների կարգավորումն ամրագրված են «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Պատմամշակութային անշարժ հուշարձանների տարածքների պահպանությունը, հուշարձանների պահպանական գոտիներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը՝ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանցից բխող այլ իրավական ակտերով:

Միաժամանակ Հայաստանի կողմից ընդունվեց «Լանդաֆտի Եվրոպական Կոնվենցիան», որը «կայուն զարգացման» գաղափարի շրջանակներում ներկայացավ որպես լանդաֆտներին վերաբերող «նոր փոխհարաբերություն»: Կոնվենցիան հիմնվեց այն պարզ գաղափարի վրա, որ մարդու կյանքի որակն ուղղակի կախվածության մեջ է նրան շրջապատող միջավայրի որակից և, հետևաբար, կարևոր են ոչ միայն արժեքավոր բնական և մշակութային լանդաֆտները, այլ նաև առօրյա միջավայրը, լքված և դեգրադացված տարածքները:

Այսպիսով, լանդշաֆտը ճանաչվում է որպես հանրության և անհատական բարեկեցության (ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և ինտելեկտուալ իմաստով) նախապայման, ինչպես նաև կայուն զարգացմանն ու տնտեսական գործունեությանը նպաստող ռեսուրս:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության և Սյունիքի մարզերի համատեղ ջանքերով իրականացվել են մի շարք հետևողական քայլեր՝ ուղղված բնության հատուկ պահպանվող տարածքների խնդիրների բացահայտմանը, վերլուծությանը, կառավարմանը և Էկոլոգաբնապահպանական քաղաքականության հիմքերի ստեղծմանը: Փուլային քայլերն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերով: Տեղական և միջազգային համագործակցության շրջանակներում կազմակերպվել են ադտոտումից զերծ գիտական և մշակութային՝ Էկոտուրիզմի տեսանկյունից արժեքավոր կենսոլորտային համալիրի կազմավորման, տարածական պլանավորման և լանդշաֆտային խնդիրների լուծմանը նվիրված համաժողովներ, որոնք օգտակար են փորձի փոխանակման, ինչպես նաև բնական ու կուլտուրական լանդշաֆտների հանդեպ մասնագետների և հասարակության ուշադրությունը սևեռելու առումով:

**Սյունիքի մարզի «Չանգեզուր» կենսոլորտային համալիր»  
ՊՈԱԿ-ի կառուցվածքը և գործառույթը**

Անվանում	Տարածքի չափը / հա/, հիմնադրման և կանոնադրության հաստատման որոշումները	Անտառածածք տարածքը /հա/	Փերատեսչական ենթակայությունը	Տեղադիրքը	Պահպանվող օբյեկտները	Պահպանության վիճակը և հիմնական խնդիրները
<b>Պետական արգելոց</b>						
«Շիկահող» պետական արգելոց»	12137.075 հա ՀՍՍՀ ՍՍ 13.09.19 58թ. № 341 որոշում, վերափոխվել է արգելավայրի 1961 թ., վերականգնվել է արգելոցի կարգավիճակը 27.10.1975 թ. №728, իրավաբանական անձի կարգավիճակ է ստացել 1998թ. ՀՀ կառավարության 30.05. 2002թ. №926-Ն որոշմամբ հաստատվել է կանոնադրության 07.09.06թ. №1401-Ն որոշմամբ հաստատվել է սահմանների նկարագիրը և տարածքի չափը	8572.0	ՀՀ բնապահպանության նախարարություն «Շիկահող» պետական արգելոց» ՊՈԱԿ	Հարավային Հայաստան, Սյունիքի մարզ, Ծավ և Շիկահող գետերի ավազաններ, Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերը, 700-2400 մ. բարձր. վրա	Կաղնուտա-բոխուտային անտառներ ու դրանց բնորոշ բուսական և կենդանական համակցություններ անթափ թույների 1074 տեսակ, կենու և սոսու անտառներ, բեգոարյան այծ, մացառախոզ, առաջավորասիական հոցազ	Պահպանությանը գրանցում Պահպանությունը բավարար է, ներկայումս պահանջ կա բարձր որակավորում ունեցող կենդանաբանների և բուսաբանների կառավարման պլանը լրամշակման փուլում է
Ազգային պարկ						

«Արևիկ» ազգային պարկ	34401.8 հա ՀՀ կառավարության 15.10.2009թ. №1209-Ն որոշմամբ հաստատվել է կանոնադրությունը	12752.0	ՀՀ բնապահպանության նախարարություն «Արևիկ» ազգային պարկ ՊՈԱԿ	Չանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջերի, ինչպես նաև Մեղրի, Շվանիծոր և Նյուվաղի գետերի ջրհավաք ավազաների տարածքներում	Բնական Էկոհամակարգերը, դրանց կենսաբանական և լանդշաֆտային բազմազանությունը, բնական պաշարները, բնության եզակի հուշարձանները, Էնդեմիկ և հազվագյուտ կենդանիների միջսահմանային բնակության միջավայրերը	
Պետական արգելավայր						
«Սոսուս պուրակ»	64.2 հա ՀՍՍՀ ՍՍ 13.09.1958թ. №341 որոշում, ՀՀ կառավարության 15.07.04թ. №1044-Ն որոշմամբ հաստատվել է տարածքի չափը	64.2	ՀՀ բնապահպանության նախարարություն «Շիկահող» պետարգելոց ՊՈԱԿ	Հարավային Հայաստան, Սյունիքի մարզ, Ծավ գետի հովտի ողողատային մասը, 700-750մ բարձրության վրա	Կովկասի սոսուսի բնական պուրակը	Բավարար վիճակ Ունի կադաստրային գրանցում Իրականացվում են վերականգնման աշխատանքներ
«Բողաքար»	728 հա 2733.62 հա ՀՍՍՀ ՍՍ 10.08.1989թ. №400 որոշում	3597.0	ՀՀ բնապահպանության նախարարություն ԲՆ «Արևիկ» ԱՊՊՈԱԿ	Հարավային Հայաստան, Սյունիքի մարզ, Հարավային Չանգեզուրի լեռնաշղթայի լանջեր, 1400-2100մ	Հայկական ֆլորայի և ֆաունայի տիպիկ տեսակներ	Միջին բավարար վիճակ
«Սև լիճ»	240 հա 371.14 հա ՀՍՍՀ ՍՍ 17.10.1987թ. №717 որոշմամբ ստեղծված արգելոցի հիմքի վրա ՀՀ կառավարության 12.10.2001թ. №976 որոշմամբ կարգավիճակը փոխվել է ՀՀ կառավարության 29.05.2002թ. №631 որոշմամբ հաստատվել է կանոնադրությունը		ՀՀ բնապահպանության նախարարություն «արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ	Հարավային Հայաստան, Սյունիքի մարզ, Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ իշխանաստեղ լեռնաստորոտի խառնարանային մասում 2658մ, հարաբառի հրաբխային բարձրավանդակ	Բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազան և նրա հարակից բնատարածքների բուսական և կենդանական համակցություններ 102 անոթավոր բուսատեսակներ, այսինքն մարագետիկները	Պահպանությունը կապված բարձր լեռնային դիրքադրության հետ բավարար է, սակայն պահպանության ոլորտի հաստիքների կրճատման հետևանքով անհասակների վիճակ է ստեղծվել պահպանման գոտու բացակայություն, գիտահետազոտական բազայի և համալիր հետազոտության բացակայություն
«Չանգեզուր»	25870.64 ՀՀ կառավարության 19.12.2013թ. №1465 որոշմամբ հաստատվել է սահմանների նկարագիրը և կանոնադրությունը: 25870.64 17368.77 հա ՀՀ կառավարության 15.10.2009թ. №1187-Ն որոշմամբ հաստատվել է սահմանների նկարագիրը և կանոնադրությունը:	425.55	ԲՆ «Շիկահող» ՊՈԱԿ	Հարավային Հայաստան, Սյունիքի մարզ, Չանգեզուրի լեռնաշղթայի Ողջի գետի ավազանի վերին հատվածը, Ողջի գետի ձախակնյա Գեղի վտակի մերձափնյա և Բարգուշատի լեռնաշղթայի հարավային ու հյուսիսային լանջերը:	Սյունիքի մարզի Չանգեզուրի լեռնաշղթայի Չանգեզուր և Բարգուշատ լեռնաբազուկների բնական Էկոհամակարգման բնական ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության պատմաբանական բազմազանությունը, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայունագործման ապահովում է:	

« Խ ո լ ս - տուփ»	6946.74 ՀՀ կա- ռավարության 19.12.2013թ. №1465-Ն որոշ- մամբ հաստատ- վել է տարածքի չափը և կանո- նադրությունը	5335.9	ԲԼ «Շիկա- հող» ՊՍ ՊՈԱԿ	Հարավային Հա- յաստան, Սյունիքի մարզ	Խուստուփ լեռնա- զանգված իանտա- ռային գոտու վե- րին հատվածի, մար- զագետնատափաս- տանային և մարզա- գետնային բնական էկոհամակարգե- րի զարգացման բնականոն ընթաց- քի, լանդշաֆտա- յին ու կենսաբա- նական բազմազա- նության, բնության հոլշարձաննե- րի, բնության ժա- ռանգության պահ- պանության, պաշտ- պանության, վե- րակազմման, վերարտադրու- յան, ինչպես նաև բնական պաշար- ների կայունօգտա- գործման ապահո- վումն է
-------------------	---	--------	------------------------------	---	---

Չի կարելի թերազնահատել նաև պահպանվող տարածքների ներգործու-  
յունը մարդու մենթալիտետի, արժեքային համակարգի ձևավորման և աշխար-  
հընկալման վրա: Ուստի դրանց ուսուցման, կրթության, իրազեկվածության  
բարձրացման խնդիրները կարևոր նշանակություն ունեն գլոբալ էկոլոգա-մշա-  
կության ռազմավարության նպատակներին հասնելու տեսանկյունից:

Մարզի պահպանվող տարածքների հիմնական նախադրյալն է՝ տնտեսա-  
կան, բնապահպանական, սոցիալական և մշակութային բաղադրիչների ներ-  
դաշնակ և փոխկապակցված զարգացումը և կայուն բնակմիջավայրի ստեղ-  
ծումն ու օգտագործումը:

Հետևաբար, պահպանվող տարածքների և շրջակա համայնքների հա-  
մաչափ զարգացման նախադրյալների ստեղծմանն է ուղղված տարածական  
պլանավորման գործիքակազմը, որի միջոցով հնարավոր է դառնում ապահո-  
վել անցումը դեպի կայուն զարգացում: Առնչվելով բազմաթիվ բնագավառների  
հիմնախնդիրներին, տարածական պլանավորումը կոչված է հավասարակշռե-  
լու պետական, հասարակական և մասնավոր շահերը, և փոխհամաձայնեց-  
նելով դրանք պլանավորում է ներկա և գալիք սերունդների համար ցանկալի  
կենսամիջավայրի ստեղծման հիմքերը:

Ժամանակակից ուրբանիզացման շարունակական ընթացքը մարդկանց  
մոտ անխուսափելիորեն ծնում է նոր ձգտումներ ու գերակայություններ: Աս-  
տիճանաբար բարձրանում է այնպիսի գործոնների դերը, ինչպիսիք են առօր-  
յա քաղաքային կյանքում կենդանի բնության հետ առնչվելու գենետիկական  
պահանջը, հարուստ կենսաբազմազանությունը, հարմարավետ ու արժանա-  
պատիվ կենսամիջավայր ունենալու ինտելեկտուալ և հոգևոր բավարարվա-  
ծության ձգտումները:

Ուստի, հանրության ակնկալիքները բավարարելու համար հարկ է նկա-  
տի ունենալ, որ ապագայի կենսամիջավայրի (կամ լանդշաֆտների) ցանկա-  
լի որակին հասնելու նախադրյալները մեծապես կախված են ներկա սերնդի  
մտածելակերպից, արժեքների համակարգից և ապագա սերնդների նկատ-  
մամբ պատասխանատվության զգացումից:

Բնության հատուկ պահպանվող տարածքների և առանձին լանդշաֆտային Էկոհամակարգերի հետ կապված գործունեությունը Սյունիքի տարածքի վրա ուղղված պահպանության, կառավարման և պլանավորման միավորված գործողություններ են, քանի որ տարածքի մի մասը պահպանության կարիք ունի՝ այդ պահպանությունն ապահովելու, ինչպես նաև ժամանակի ընթացքում անխուսափելի փոփոխությունների շրջանակները սահմանափակելու և մնացած տարածքն առողջացնելու և բարելավելու համար անհրաժեշտ են կառավարման գործողություններ: Միևնույն ժամանակ, որպեսզի առկա պահպանվող տարածքների և լանդշաֆտների փոփոխություններն ու նորերի ստեղծումը լինեն կանխատեսելի՝ անհրաժեշտ են համալիր գործողություններ պլանավորման ուղղությամբ:

Պահպանության գործողությունների հաջողությունը պայմանավորվում է ոչ միայն օգտագործման հետ կապված ռեժիմների և/կամ տարածքների պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացմամբ, այլև հարակից տարածքներում անթրոպոգեն ճնշումների վերաբշխմանը և վերահասցեագրմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացմամբ:

Սյունիքի մարզը, բացի վերը նշված բնության հատուկ պահպանվող տարածքներից, որն ամբողջությամբ ընդգրկված է «Չանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի կազմում (բացառությամբ բնության հուշարձանների) առանձնանում է նաև բազմաթիվ բնական ու կուլտուրական լանդշաֆտների բազմազանությամբ և օգտագործման հեռանկարայնությամբ: Բնական լանդշաֆտային կարևորագույն Էկոհամակարգերից Սյունիքի մարզում կարելի է առանձնացնել՝ Սոսու հունամերձ անտառը, փշոտ ցաքութփուտները, նռենու, պիստակենու նոսրանտառը, տանձենու սաղարթավոր նոսրանտառները և այլն: Կուլտուրական լանդշաֆտներից կարելի է ընդգրկել ինչպես Սյունիքի արտավայրերն ու խոտհարքները, այնպես էլ մշակովի բուսաբուծության, պտղաբուծության և խաղողագործության տարածքները:

Հետևաբար, դրանց կառավարումն ու պլանավորումը հաստատուն և գիտականորեն հիմնավորված գործողություն կարելի է համարել, ուղղված լանդշաֆտների հեռանկարային զարգացման, վերականգնման, կազմավորման (ստեղծման) կանխորոշմանը: Ըստ Էության դա նույնն է, ինչ տարածական/տարածքային պլանավորումը, որը, հաշվի առնելով տնտեսական և բնական գործընթացները, նախատեսելով սոցիալական պահանջների զարգացումները՝ կոչված է պլանավորելու լանդշաֆտների այնպիսի փոփոխություններ, որոնք կբավարարեն հասարակության պահանջները և միաժամանակ, համատեղելի լինեն կայուն զարգացման նպատակներին:

Պլանավորման առարկա են նաև արտադրական և կենցաղային թափոններով աղտոտված հողամասերը, արդյունահանման հետևանքով սպառված և լքված հանքավայրերը, բուսականությունից զուրկ, քամու և երոզիայի ազդեցության տակ քայքայված լեռնալանջերը, ինչպես նաև տարածքներ, որոնք առանց մարդու կողմից նպատակային դրական միջամտության երկար տարիների ընթացքում չեն վերականգնվի և, փաստորեն, կորցված կլինեն նաև ապագա սերունդների համար:

Նպատակահարմար է սահմանել լանդշաֆտային նախագծերի և ուսում-

Նասիրությունների արդիականացման կամ վերանայման ժամկետները, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են առնչվող տարածքների փոփոխությունների արագությունը, հասարակության զգայնությունը կոնկրետ խնդիրների նկատմամբ, լանդշաֆտների որակն ու ներուժը՝ դիտարկելով դրանք կայուն զարգացման ապահովման տեսանկյունից:

Լանդշաֆտների որակի նպատակին հասնելու համար կարող են կիրառվել տարբեր գործիքներ: Դրանք կարող են ներառել ինչպես իրավական կանոնակարգման ձևերը, այնպես էլ սեփականատերի և օգտագործողների հետ պահպանության, կանաչապատման, վերափոխման, վերակառուցման և վերանորոգման պայմանագրերով նման գործողությունները խթանող մեխանիզմների ամրագրումը: Լանդշաֆտների պլանավորման հետ առնչվող քաղաքաշինության խնդիրները պետք է դասակարգվեն, ելնելով տարածքների առանձնահատկություններից, ինչպես նաև կարող են առանձնացվել որպես լանդշաֆտի հատուկ ուսումնասիրությունների և նախագծման թեմաներ, մասնավորապես՝ քաղաքային մոտեցումներ, քաղաք-գյուղ սահմաններ, քաղաքային արվարձաններ և տարածքներ, գծային կապեր տարբեր բնակավայրերի միջև (եզրային զարգացումներ) և այլն:

Լանդշաֆտների որակի կարևոր չափանիշ է հասարակության համար մատչելիության պայմանը: Մի կողմից անհրաժեշտ է, որ երաշխավորված լինի մասնավոր սեփականության իրավունքը, մյուս կողմից անհրաժեշտ է նաև ապահովել հանրության համար վայելումը՝ նախատեսելով, մասնավորապես, հարմար մոտեցումներ ու երթևեկության ճանապարհներ, կայաններ և այլն:

Բնության հատուկ պահպանվող տարածքների օրինակով, լանդշաֆտները նույնպես պետք է վերլուծվեն բնական, երկրաբանական, հնագիտական, պատմական և մշակութային առանձնահատկությունների, դրանց փոխկապակցվածության և փոփոխությունների պատճառների տեսանկյունից: Կարևոր է նաև վերլուծել հասարակության կողմից լանդշաֆտի ընկալումը, ինչպես պատմական զարգացումների, այնպես էլ արդի նշանակության տեսանկյունից:

Լանդշաֆտների «նկարագրում-գնահատում-իդենտիֆիկացում» գործողությունը նպատակահարմար է իրականացնել (և որոշ չափով ներկայումս իրականացվում է) տարածքային փոփոխությունների կառավարման գործիքներով՝ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման միջոցով: Համալիր վերլուծության ու գնահատականի առարկա են հանդիսանում բնական և մարդածին (քաղաքաշինական) լանդշաֆտների բոլոր հիմնական բաղադրիչները: Այդ թվում՝

ա) բնական՝ բնակլիմայական պայմաններ, ռելիեֆ, հողային ծածկույթ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն, օգտակար հանածոների պաշարներ, վտանգավոր բնական երևույթներ, ինժեներաերկրաբանական պայմաններ,

բ) քաղաքաշինական՝ բնակավայրեր, գործառնական տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, բնապահպանական ժառանգության օբյեկտներ, բնակավայրերի բաց տարածքներ (հրապարակներ, հասարակական կենտրոններ, դենդրոպարկեր, զբոսայգիներ, պուրակներ), ինժեներանսպորտային ենթակառուցվածք և այլն:

Սյունիքի լանդշաֆտա-բնապահպանական և էկոլոգա-մշակութային առանձնահատկությունների մասին գիտելիքի ձեռքբերումը պետք է դառնա ուսուցողական, կրթական և որակավորման ծրագրերի, ինչպես նաև կենսաբանական խնդիրներին առնչվող ոլորտներում իրականացվող գիտական (մագիստրոսական, ատենախոսական, դոկտորական) աշխատությունների առարկա: Գիտական ուսումնասիրություններն ունեն լավագույն հնարավորություններ պահպանվող տարածքներում անհրաժեշտ մոնիտորինգ ու կադաստր վարելու, ապագայի համար կանխատեսումներ ունենալու և առաջարկվող լուծումները հաշվարկային և փորձնական ճանապարհով ստուգելու համար: Ուսումնասիրությունը պահանջում է բավարար գիտելիքներ, որոնք կարող են օգտակար լինել գիտական հետազոտությունների համար և հիմնավորել դրանք: Մասնակցության պահանջն ապահովում է պահպանվող տարածքների և լանդշաֆտների սոցիալական ընկալման ու բնակչության ձգտումների հաշվառումը՝ բնության պահպանության, կառավարման և պլանավորման գերակայությունների նախանշման հարցում:

Գիտական ուսումնասիրությունների արդյունքների հրատարակումը և տարածումը կարող է ապահովել ծանոթագրական նյութերի մեծ բազմազանություն, նպաստելով հանրության իրազեկության բարձրացմանը, հաղորդակցության միասնական լեզվի ձևավորմանը, ինչպես նաև պահպանվող տարածքներին ու լանդշաֆտներին վերաբերող վերլուծական, տեղեկատվական, քարտեզագրական, լուսանկարչական և այլ նյութերի բազաների ստեղծմանն ու տարածմանը:

**ЛАНДШАФТО-ЭКОЛОГИЧЕСКИХ И КУЛЬТУРНО-ЭКОЛОГИЧЕСКИХ СОБЕННОСТИ СЮНИКА - АРТАШЕС ЗИРОЯН, ТИГРАН ТАНГАМЯН, КНАРИК УЗУНЯН, АРМЕНИИ ПИЛТАКЯН** - Приобретение знаний о ландшафтно-экологических и культурно-экологических особенностях Сюника, должны стать обучающими, образовательными и предметами для научных исследований (магистратура, аспирантура, докторантура), проводимых в сферах касающихся биологических проблем и квалификационных программ. Научные исследования обладают возможностями для проведения необходимого мониторинга и ведения кадастра в охраняемых зонах, а также для проверки путем расчета и опыта предлагаемых решений и прогнозов на будущее. Исследование требует соответствующих знаний. Требование участия обеспечивает учет стремления населения и социального восприятия в вопросах охраны природы, руководства и расчете планирования приоритетов.

Публикация и распространение результатов научных исследований может обеспечить большое разнообразие ознакомительных материалов, что может способствовать повышению осведомленности населения, формированию единого языка общения, а также созданию и распространению аналитических, картографических, фотографических и других материалов касающихся охраняемых зон и ландшафтов.

Публикация и распространение результатов научных исследований может обеспечить большое разнообразие ознакомительных материалов, что может способствовать повышению осведомленности населения, формированию единого языка общения, а также созданию и распространению аналитических, картографических, фотографических и других материалов касающихся охраняемых зон и ландшафтов.

**Ключевые слова:** особо охраняемая территория, биосфера, экосистема, ландшафт, биоразнообразие, экология.



**THE LANDSCAPE-ENVIRONMENTAL AND ECO-CULTURAL PECULIARITIES OF SYUNIK - ARTASHES ZIROYAN, TIGRAN TANGAMYAN, QNARIK UZUNYAN, ARMENUHI PILITAKYAN**

The acquisition of knowledge about landscape-environmental and ecological-cultural peculiarities of Syunik should become the subject of scientific (master's, thesis, doctoral) works in the fields of education, training and qualification programs as well as biological problems. Scientific researches have the best opportunities for monitoring and cadastre maintenance in the protected areas, making predictions for the future, and checking the proposed solutions in a computational and experimental way. The student has sufficient knowledge that can be useful for scientific research and substantiate them. The participation requirement provides for the social perception of the protected areas and landscapes and the population's intentions to prioritize environmental protection, management and planning.

Publishing and dissemination of scientific research results can provide a wide variety of narrative materials, promoting public awareness, forming a common language of communication, as well as creating and disseminating analytical, informational, cartographic, photographic and other materials relating to protected areas and landscapes.

**Keywords:** specially protected areas, biosphere, ecosystems, landscape, biodiversity, ecology.

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Зироян А.Н., Эколого-биоэнегетическая оценка растительности Армении. Ереван, изд. «Лусабац», 2008, 353 ст.
2. Зироян А.Н., О классификации растительности Армении. Актуальные проблемы гуманитарных и естественных наук, М., N 04 (99), 2017, ч.1, ст.41-49. և Տ., Կենսաբանություն. Ոստմնական ձեռնարկ, Երևան, Էդիթ Պրինտ, 2016, 552 էջ